# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2026 թվականի N 94 - Ա

## ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՖՈՒՏԲՈԼ ՄԱՐԶԱՁԵՎԻՑ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 450-Ն որոշման հավելվածի 5-րդ և 6-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2025 թվականի ձմեռային զորակոչից մինչև 2027 թվականի ձմեռային զորակոչը տարկետում տալ սպորտի բնագավառում ֆուտբոլ մարզաձևից նշանակալի նվաճումներ ունեցող մի շարք քաղաքացիների՝ համաձայն հավելվածի:

2. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2025 թվականի ձմեռային զորակոչից սկսած մինչև 26 տարին լրանալը տարկետում տալ Արթուր Միերի Պատատյանին (ծնվ.՝ 2001 թվականի սեպտեմբերի 9-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 1 նրբ., տ. 5ա, Երևանի N 2 ԶԿ)՝ ֆուտզալի

ՀՀ ազգային հավաքականի անդամ (նախորդ տարկետումը տրամադրվել է ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 25-ի N 112-Ա որոշմամբ՝ մինչև 2025 թվականի ձմեռային զորակոչը)։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

22.01.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ